Արձանագրություն N 5
«ԳՀԱՊՁԲ-2019/16-15-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» «մայիսի» 2019թ.
ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Եղիազարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Հակոբյան, Հ.Սարգսյան, Կ.Մկրտչյան, Է.Միրոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան
Բացակայում էին՝

1. «ԳՀԱՊՁԲ-2019/16-15-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի ՀՀ ՊԵԿ կողմից համապատասխան հավաստման ստացման և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից համապատասխան հիմքերի ներկայացման մասին

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների, բացի «Խաչպար» ՍՊ ընկերության, կողմից ներկայացված հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող: «Խաչպար» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

1.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը ծանուցել է «Խաչպար» ՍՊ ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Նույն օրը /մայիսի 8/ «Խաչպար» ՍՊ ընկերությունը շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

1.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊ ընկերության տվյալները չեն ներկայացվելու լիազորված մարմնին:

1.4 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են համապատասխան հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ԳՀԱՊՁԲ-2019/16-15-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի չկայացած չափաբաժինների և գնային բանակցությունների մասին

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով հանձնաժողովը որոշեց մերժել «Խաչպար» ՍՊ ընկերության N 3, 6, 15, 19, 25, 30, 37, 44, 47, 48, 49, 55 և 72 չափաբաժինները:

2.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 19 և 25 չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ չկան՝ վերոհիշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով հայտարարվում են չկայացած:

2.3 N 30 չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեդիտեք» ՍՊ ընկերությանը, N 47, 48, 49 և 72 չափաբաժինների մասով՝ «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությանը, N 55 չափաբաժնի մասով՝ «Դավ Պրոդուկտ» ՍՊ ընկերությանը, և առաջարկել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման փաստաթղթերը:

2.4 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ N 3, 6, 15 չափաբաժինների համար հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկները գերազանցում են այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև այն որ N 37 և 44 չափաբաժինների համար հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են հավասար գնային առաջարկներ, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետերի բ) և գ) պարբերությունները՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել հանձնաժողովի նիստը և գները նվազեցնելու նպատակով հրավիրել միաժամանակյա գնային բանակցություններ, որը կկայանա սույն թվականի մայիսի 14-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Եղիազարյան

Անդամներ՝ _____ Ա.Հակոբյան

_____ Հ.Սարգսյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Է.Միրոյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան